—«Անօգուտ», պատասխանեց Բրօն, «արդէն մութն է, մենք մթութեան մէջ կսպրտեմք և ժայռերին դիպչելով փշուր ! մշուր կը լինինք։ Բացի այդ մենք մոլորուել ենք։

«Ուրեմն դիշերենք այստեղ»։

—«Այո, այստեղ այնքան ապահով է, որ սատանէքն անդամ մեզ չեն կարող գտնել։

Ես սաստիկ հոգնած էի, իսկոյն հրացանս և մէջքս կրթնեցրի քարին, պպզեցի և գլուխս երկու ձեռներիս մէջը դրի։

«Ի՞նչ ես մտածում», հարցրեց Բրօն։

—«Հիմա», պատասխանեցի ես, «իմ ընկերներս և ծանօթներս հանդիստ տաք սենեակում նստած թէյ են խմում»։

Բրօն ծիծաղելով իմ երեխայական դանդատի վերայ։—«կարելի է իրիկնահաց են ուտում»—հեգնութեամբ ասաց։

Նա ակնարկում էր, որ մենք ուտելու հաց չունինք. իսկ էլ. թեթևութեան համար ոչինչ չէինք վեր առել մենք, յուսալով, որ քրդերի մէջ կը գտնենք։ Իսկոյն միտս ընկաւ որ գրպանումս փոքրիկ շիշով օղի ունէի, ձեռս տարայ և բարեբաղտաբար անվնաս գտայ։ Այդ ոգելից ըմպելին այսպիսի հանդամանքներում խիստ կազդուրիչ է։ մանաւանդ մեզ համար, որ թէյի և իրիկնահացի տեղ էր բռնում. ախորժակով երկու կում խմեցի և շիշը առաջարկեցի Բրօին, որ քիչ նազելուց յետոյ,